

Արձանագրություն № 6 (313)
ԵՊՀ-ի ուս. քանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ-ի փետրվարի 8-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 18-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. 2018-2019 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:
2. Գիտական Խորհրդի կազմում փոփոխությունների մասին:
3. Մեթոդական Խորհրդի կազմում փոփոխությունների մասին:
4. Կրթության որակի ապահովման հարձնաժողովի կազմում փոփոխությունների մասին:
5. ԵՊՀ-ի անվանական կրթաթոշակների հարցը:
6. Մանկավարժական պրակտիկայի մասին:
7. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ` 2018-2019 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ` Ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ. Գազարովան:

Ավարտվել է ձմեռային քննաշրջանը, արջևում` փետրվարի 6-14, առաջին լուծարքային շրջանն է: Լուծարքը անցկացվում է հանձնաժողովի ներկայությամբ` դեկան կամ տեղակալ, ամբիոնի վարիչ և դասախոս:

Ֆակուլտետի բակալավրի 106 ուսանողներից 19-ը ունեն անբավարար գնահատականներ: Մտահոգիչ է իրավիճակը 2-րդ կուրսի *ռուսաց լեզու և գրականություն* բաժնում: 33 ուսանողներից 12-ը ստացել են անբավարար գնահատականներ, հիմնականում *ռուսաց լեզվի պրակտիկում, արտասահմանյան գրականության պատմություն, լեզվի պատմություն* առարկաներից:

Մագիստրատուրայի 22 ուսանողներից 2-ը /2-րդ կուրս/ ունեն անբավարար գնահատական:

Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի, *ՄՄՀ* բաժնի 3-րդ կուրսի և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողները ավարտել են քննաշրջանը առանց պարտքերի: Գերազանցիկների ամենամեծ թիվը 4-րդ կուրսում է, ամենաքիչը` 3-րդ կուրսի *ռուսաց լեզու և գրականություն* բաժնում:

ՈՐՈՇԵՑԻՆ` Տեղեկությունը ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ` Գիտական Խորհրդի կազմում փոփոխությունների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը: Կյանքից հեռացած ռուս գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Մերի Վարդանի Պետրոսյանը հանդիսանում էր ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ: Այժմ Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում պետք է փոփոխություններ կատարել: Գիտական խորհրդի անդամ է առաջադրվում ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ դասախոս Ալլա Ռաֆայելի Բաղդասարյանը:

Քվեարկության արդյունքներով /17 կողմ, 1 ձեռնպահ/ Ալլա Ռաֆայելի Բաղդասարյանը ընտրվեց Գիտական խորհրդի անդամ

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ դասախոս Ալլա Ռաֆայելի Բաղդասարյանը ընտրվում է Գիտական խորհրդի անդամ:

3. ԼՍԵՑԻՆ՝ Մեթոդական Խորհրդի կազմում փոփոխությունների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

Մեթոդական խորհրդի անդամ է առաջարկվում ռուս գրականության ամբիոնի դոցենտ Յուլիա Խոջոյանը, քանի որ տվյալ ամբիոնի կողմից խորհրդի անդամ՝ Մարիամ Այվազյանը անցել է թոշակի:

Բաց քվեարկության արդյունքներով Յուլիա Խոջոյանը միաձայն ընտրվեց Մեթոդական Խորհրդի անդամ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռուս գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Յուլիա Միքայելի Խոջոյանը ընտրվում է Մեթոդական Խորհրդի անդամ:

4. ԼՍԵՑԻՆ՝ Կրթության որակի ապահովման հարձնաժողովի կազմում փոփոխությունների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

Կրթության որակի ապահովման հարձնաժողովի կազմում առաջադրվում է ռուս գրականության ամբիոնի դոցենտ Ռուզան Աշոտի Տեր-Գրիգորյանի թեկնածությունը:

Քվեարկության արդյունքներով Ռուզան Աշոտի Տեր-Գրիգորյանը միաձայն ընտրվեց կրթության որակի ապահովման հարձնաժողովի անդամ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռուս գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռուզան Աշոտի Տեր-Գրիգորյանը ընտրվում է կրթության որակի ապահովման հարձնաժողովի անդամ:

5. ԼՍԵՑԻՆ՝ 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Պ. Բալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ առաջադրել հետևյալ անձանց.

Կարապետյան Մարինե (բակալավրիատի /լեզվաբանություն և ՄՄՀ/ 3-րդ կուրսի ուսանող)՝ **Վ.Բոյուսովի անվան կրթաթոշակ.**

Մհերյան Սոնա (բակալավրիատի /ռուսաց լեզու և գրականություն/ 3-րդ կուրսի ուսանող)՝ **Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ:**

6. ԼՍԵՑԻՆ՝ Մանկավարժական պրակտիկայի մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը:

Փետրվարի 11-ին ժամը 14.30 կայանալու է մանկավարժական պրակտիկային վերաբերող կոնֆերանս: Մանկավարժական պրակտիկան անց է կացվում ք.Երևանի դպրոցներում, հեռավոր շրջանների ուսանողների համար՝ ըստ բնակության վայրի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

7. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Պ.Բալայանը:

- Ապրիլ ամսին ժամկետն է ավարտական և մագիստրոսական աշխատանքների ստուգումը Հակագրագողություն ծրագրով:
- Ունենք 3 ուսանող Իտալիայից *ռուսաց լեզու և գրականություն* բաժնում:
- 2019 աշնանը Ֆակուլտետում կայանալու է ԵՊՀ 100-ամյակին նվիրված գիտաժողովը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հայտարարությունները ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ